



Լաբորատոր աշխատանք

ԱՐԵԳԱԿԻ և ԼՈՒՍՆԻ ԽԱՎԱՐՈՒՄՆԵՐԻ ՄՈԳԵԼԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է նկարագրել Լուսնի և Արեգակի խավարումների պատճառները:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: Լուսի աղբյուր, 4սմ և 1սմ տրամագծով երկու գունդ, որոնք ամրացված են 120սմ երկարությամբ ուղիղ ձողի ծայրերին՝ դեմ դիմաց:




Աշխատանքի ընթացքը: Մեծ գունդը ներկայացնում է Երկիրը, փոքր գունդը՝ Լուսինը, իսկ լայտերը՝ Արեգակը:

Լուսի փունջը գցել Երկրի կողմից այնպես, որ Լուսինը հայտնվի Երկրի ստվերում: Դա Լուսնի խավարումն է, երբ Արեգակի լույսը չի հասնում Լուսնին, քանի որ Երկիրը փակում է լուսի ճանապարհը:



Երկրորդ դեպքում լուսի փունջը պետք է գցել Լուսնի կողմից, որի փոքրիկ ստվերն ընկնում է Երկրի վրա: Այդ ստվերի մեջ գտնվողների համար տեղի է ունենում Արեգակի խավարում, չնայած Երկրի մնացած մասերը լուսավորվում են Արեգակի լույսով:



Աշակերտներին պետք է բացատրել նաև, որ Արեգակի խավարումներ լինում են միայն նորալուսնի, իսկ Լուսնի խավարումներ՝ լիալուսնի փուլում: